

տալով՝ կ'ըսէին թէ յոպոպին սիրտը կուշտի ցաւի դեղ է, և թէ յոպոպին լեզուն մարդուս վզին կապելով յիշողութիւնը կը զօրանայ. փետուրներուն ծուխը զօրաւոր դեղ է փորուռձիի դէմ. մորթը մարդուս ճակատը դնելով գլխու ցաւը կը քաշէ. դարձեալ կ'ըսէին թէ որ մէկը յոպոպին արիւնը ակընջին տակը քսելու ըլլայ, ուրախալի ու զուարձալի երազներ կը տեսնէ: Այս առասպելները հիմա մոռցուած են. իսկ թէ ինչու է որ աս գեղեցիկ թուշունը անարգ կը սեպուի, ասոր ուրիշ պատճառ չենք գտներ՝ բայց եթէ իրեն գարշահոտութիւնն ու անախորժ ձայնը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՄԴՈՒԹԻՒՆ

Առի նման բոյսերը իրունէ պահելու հասրա:

Ուսած ու խոնաւ երկիրներու մէջ երբոր սոխ կը ցանուի, ամենեին առաջ զգար. վասն զի գետնին թացութենէն արմատին վրայ բորբոս կը կապէ. անոր համար է որ կը սկսի ծղօտին գոյնը փոխուիլ, ու կամաց կամաց կը դեղնի, տերեներն ալ կը լիսկին: Այս բանիս դարմանը ածուխի փոշին է, որ դիզուած ածուխներուն տակը կը գտնուի: Վանի որ սոխին կամ անոր նման բոյսերուն հունտը չես ցանած, երկիրը աղէկ մը փորէ կակըղուր յետոյ վրան կէս բթաչափ թանձրութեամբ ածուխի փոշի ցանէ, ու ետքը թեթե կերպով երեսէն խառնէ որ հողին հետ միանայ, ու ցանէ հունտգ:

Չ ատ փորձեր ըրած են աս բանիս վրայ, և ամէնն ալ յաջողեր էն: Տասնըհինգ ոտնաշափ երկայն ու հինգ ոտք լայն արտ մը կայ եղեր սոխի՝ դիրքը ըստ թաց ու խոնաւ, ասոր մէկ կողմին վրայ վերոյիշեալ գործողու-

թիւնը ընելով, այսինքն ածուխ խառնելով շատ աղէկ սոխեր բուսեր են, իսկ ան մասին մէջիններն՝ որուն հողին մէջ ածուխի փոշի չկայ եղեր՝ բոլորն ալ բորբոս կապելով փշացեր են: Այս դրուած փոշին չոր պիտի ըլլայ. չոր պահելու համար ալ կընաս մէկ ծածկի մը տակ դիզել, ու վրան խոտերով գոցել:

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Ա ԷՆԵՐԻ ԱԵՐԻԱԷԼ :

ՀԻՆ ատենի գեղերուն մէջ, ինչուան հիմա ալ արեելցոց մէջ, ամենէն անուանի գեղը կրնայ ըսուիլթերակէս կամ թերիակէ ըսուածը: Այս անունը յունարէն է, ու գաղանային ըսել է, որովհետեւ բաղադրութեանը մեծ մասը իմի միս է. ինչպէս որ մեր կազիկն ալ կ'ըսէ. “ Օ ի՞նչ չար քան զօձ կայցէ. և ՚ի նմանէ թերիակէ ”:

Ոմանք կ'ըսեն թէ թերիակէն հընարողն է, երոնի կանումաքոս անունով լիետացի բժիշկը. բայց աւելի հաւանական կ'երենայ թէ ասոր բուն գտնողն եղաւ մեր միջին Ծիգրանին քեռայրը մեծն Ոիհրդատ, որ Պոնտոսի թագաւորն էր. և աս բանս հին հեղինակներն ալ կը հաստատեն. վոզի Պիլինոս կը պատմէ թէ երբոր Պոմպէոս յաղթեց Ոիհրդատայ, անոր արքունեացը մէջ գտաւ շատ տեսակ գրքեր բուսաբանութեան ու բժկականութեան վրայ, ու լատիներէն թարգմանել տուաւ. ասոնց մէջն էր նաև թերիակէի վարդապետութիւնը իր ձեռքովը գրած. թերիակէն նիւթէ բաղադրուած էր, կ'ըսէ նոյն պատմից. աս բանս կը հաստատեն նաև Պոմպէոս Լինէոս, Աերենոս Աամմոնիքոս, Պաղիանոս ու Աելաոս: Այս մատենագիրները

1 Ա.Ա.Յանուարիան:

աս ալ կ'ըսեն՝ թէ Ա՛իհրդատ պզտի-
կուց՝ ի վեր աս դեղթափը շատ դոր-
ծածելուն համար՝ անանկ ուժովցեր
ու քաջացեր էր, որ երբոր իմացաւ
թէ իր կեցած բերդը թշնամիներուն
ձեռքը մատնուցաւ, բոլոր ընտա-
նեացը թոյն խմցընելով սպաննելէն
ետքը՝ ինքն ալխմեց, բայց իրեն ա-
մենեին չգորեց, և որպէս զի թշնա-
մեաց ձեռքը չիյնայ՝ հարկ եղաւ որ
ինքզինքը թրով սպաննէ. մէկ վկայու-
թիւնն ալ աս է որ ինչուան հիմա
Խւրոպացիք թերակիեին Ա՛իհրդա-
տեան դեղթափ ալ կ'ըսեն :

Այսչափ վկայութիներով աս կար-
ծիքը հաստատուելէն ետքը, թէ որ
մէկը ըսէ թէ հապա ինչու ոմանք ալ
Անդրումաքոսին կուտան աս գիւտը,
կ'ըսենք թէ ինչպէս որ շատ բժիշկներ
աշխատեցան աս դեղը կատարելագոր-
ծելու համար, ասոնցմէ մէկն ալեղած
կ'ըլլայ՝ Լերոնին բժիշկը Անդրումա-
քոս, և թերեւս ինքը առջինիւթերուն
մէջ աւելցուց իժի միսը, ու ինքը առ-
ջինը եղաւ որ ոտանաւորով մըն ալ
աս դեղը ստորագրեց, ետքը իր որ-
դին նոյն ոտանաւորը արձակ շարա-
դրութիւն փոխեց :

Աս դեղը երկայն ատեն ծածուկ
մնալէն ետքը, կամաց կամաց յայտ-
նուեցաւ, ու շինելուն կերպը բոլոր
Խւրոպա տարածուեցաւ. բայց ամէն
տեղի շինածներուն մէջ միշտ երեւ-
լի եղած է Ա Ենետիկինը, որուն վրայ
կ'արժէ որ քիչ մը երկայն խօսինք :

Ուերիակէն Ա Ենետիկի մեծ վա-
ճառքներէն մէկը ըլլալով, հասարա-
կապետութիւնն ալ մեծ պատիւներ
կուտար ասիկայ շինողներուն. ով որ
աս արտօնութիւնը կ'ունենար, ուրիշ
պատուանուններէն զատ աս խօսքս
ալ կը դնէր իր խանութին վրայ Ծաւ-
րէկէ լինող, որ մեծ ձեմարանի մը
անդամ ըլլալու չափ պատիւ էր: Աս
սովորութիւնը թէպէտ և ինչուան
հիմա կայ Ա Ենետիկ, բայց արտօնու-
թիւն ունեցողները շատ ըլլալուն
յարգը շատ ընկած է: Դեղածախ-

ները ուզած ատեննին չեն կրնար թէ-
րիակէ շինել, հապա միայն տարին
մէկ երկու անգամ: Արբոր դեղա-
ծախ մը ուզէ թերիակէ շինել, առաջ
պէտք է երթայ ու տէրութէն մաս-
նաւոր հրաման առնէ, որպէս զի կա-
րող ըլլայ իր խանութին առջեւը աս
դեղիս վերաբերեալ նիւթերը դնել.
նիւթերը լեցուցած են ապակիէ ու
յախճապակէ անօթներու մէջ. նոյն-
պէս ան ընտանի ու օտար բոյսերն որ
թերիակէ շինելու կը գործածուին .
աս նիւթերը խանութին առջին բըր-
գաձեւ կը շարեն. միայն թէ օտար եր-
կրի բոյսերը դեղնցած ու չորցած ըլ-
լալուն՝ հաստ թղթի վրայ անոնց պատ-
կերը կը քաշեն ու զանոնք կը շարեն
խանութին առջեւը. իսկ բուն իրակա-
նը ներսը ըլլալուն՝ ուզողը կ'երթայ
կը տեսնէ: Աս հանդէսը իրեք օր կը
տեսէ, գիշերներն ալ ձրագներով ու
կանթեղներով խանութը կը զարդա-
րեն որչափ որ կրնան, ջանալով որ աս
կողմանէ իրարմէ վար չմնան: () տա-
րական մը երբոր աս հանդէսին պատ-
ճառը չգիտեր, ու իմանալու ալ հե-
տաքրքիր չէ, չկրնար ասկէ բան մը հաս
կրնալ: Արդուն մէկը հրատարա-
կեր է Փարիզ՝ թէ Ա Ենետիկի դեղա-
վաճառները միայն ծաղիկ կը ծախեն .
զարմանք չէ, վասն զի շատ անգամ
ձամբորդութիւն ընողները տեսած-
ներուն վրայ վեր՝ ի վերոյ կընային .
ընդհակառակն թէ որ հետաքրքրու-
թեամբ հարցընելու ըլլային, ասոր
վրայօք շատ բան կրնային իմանալ:

Արբոր թերիակէն շինելու օրը կու-
գայ տէրութէ մեծ պաշտօնատէրնե-
րուն, քաղաքին գլխաւոր բժիշկին և
ուրիշ պաշտօնատէրներուն ու բժիշկ-
ներուն հետ կ'երթան այցելութի կ'ը-
նեն թերիակէ շինողին խանութը. ան
դեղին վերաբերեալ ինչ նիւթ որ կայ՝
լաւ մը քննելէն ետքը՝ մէկիկ մէկիկ
կ'առնեն ու կարգաւ շարած պղնձէ
ամաններուն մէջ կը դնեն. անոնց
չորս դին ալ մարդիկ կեցած՝ կը սկսին
որոշեալ համրանքով ծեծել. մեծ

պաշտօնատերը իր այցելութիւնը ընելէն ետքը, ան ծաղկըներէն կտոր մը կ'առնէ, ուրիշ պարգևներ ալ առած՝ ինչպէս որ սովորութիւն է՝ կ'ելլէ կ'երթայ . բայց պաշտօնատերներէն մէկը միշտ հոն կը կենայ ինչուան եօթներորդ օրը . ան օրը ամէն նիւթերը մէկ կ'ընեն ու մեղքով լեցուն խալինի մը մէջ կը դնեն, ետքը կը բաժնեն այլևայլ թիթեղէ ամաններու մէջ, ու թղթով կը պատեն, վրան ալ ոսկեզօծ կնիք մը կը զարնեն՝ մարդու գլուխ ձեացուցած, և բոլոր աշխարհք կը խաւրեն :

Դիա աս կերպով Ա ենետիկի թերիակէն երկար ատեն իր յարգը պահած է : Գուցէ ոմանց ծիծաղելիքան մը երենայ մէկ դեղի մը համար այսչափ պատրաստութիւնը, բայց Ա ենետիկի տերութիւնը աս կերպը բանեցընելուն համար ամէն անգամ գրեթէ կէս միլիոն ֆրանք կը վաստրկէր . և թէպէտ Ա ենետիկի հասարակապետութիւնը հիմա չկայ, բայց իր թերիակէն միշտ անմահ մնացած է :

ՕԳՏԱԿԱՄ ԳԻՒՏԵՐ

Ալանեւեներուն լոյս շապացնելու դիւրին իւրա :

Յօվասանէս Հերշէլ երեելի աստղաբաշխը Ա ոնտրայի օրագիրներէն մէկուն մէջ կ'ըսէ թէ քանի մը տարի կայ որ կանթեղիս լոյսը ես աս կերպով կը շատցընեմ: Լանթեղիս վրայ անցուցած ապակի խողովակը պատրուգին դրսի տրամագծին քառորդին չափ վեր կը բարձրացընեմ՝ պատրուգին ծայրէն առնելուն առնելով: Ա կերպով բոցը խողովակին մէջ կ'ամփոփի ու կ'երկըննայ . ամենեին ծուխ չհաներ, ու լոյսը այնչափ կը պայծառանայ որ մարդուն աչքը կ'առնէ . եղին վրայ ալ մեծ տարբերութիւն մը չըլլար: Ա բանս ընելու համար պատրուգին

քովէն չորս յենարան շինելու է . բայց որովհետեւ ամէն պատրուգին տրամագիծը նոյնչափ չէ, անոր համար ամէն կանթեղին յենարաններուն բարձրութիւնն ալ հաւասար պիտի ըլլայ, հապա ինչպէս որ ըսինք՝ պատրուգին տրամագծին քառորդին չափ . և աւելի աղէկ կ'ըլլայ թէ որ աս յենարանները պտուտակ՝ ըլլան, որ ուզածիդ պէս վեր վար կարենաս իջեցընել, ու յարմար տեղը հաստատել:

Գ աւր չընծող կտաւ շինել:

Ա եկ լիտր զուտ ջրի մէջ 15 կրամ մաքուր ձկան սոսինձ՝ լուծէ . ուրիշ ամանի մը մէջ մէկ լիտր եռացած ջըրով 30 կրամ պաղլեղ՝ հալեցուր . կէս լիտր ջրի մէջ ալ 30 կրամ ձերմակ սապոն լուծէ ու պաղլեղին հետ խառնէ: Ա ս երկուքն ալ զատ զատ լաթով քամելէն ետքը, երկուքը մէկէն ամանի մը մէջ լեցուր ու կրակի վրայ դիր: Ա ս ելլելուն պէս՝ կրակէն մէկդի առ, ու կտաւդ տախտակի մը վրայ տարածելէն ետքը՝ վրձինով աս ջրէն քսէ անոր վրայ խաւ ՚ի վար, այսինքն լաթին խաւին շտկութեամբը: Արբոր բաւական չորնայ, ան ատեն նորէն վրձինով քսէ խաւ ՚ի վեր՝ առջինին հակառակ . ետքը մաքուր ջուր սրսկէ ու վրձինով շփէ, որպէս զի ան սոսնձէն առաջ եկած փայլունութիւնը կորսուի: Արեք օր անցնելէն ետքը սաստիկ կը չորնայ, ու կտաւը ամենեին ջուր չծրծեր: Արբոր կ'ուզէս մետաքսէ ու բամբակէ բարակ լաթերու վրայ ընելաս բանս, ան ատեն ջրին չափը դրածներնուս կէսը պիտի ըլլայ . և փոխանակ վրձինով վրան քսելու, կտաւը ջրին մէջ թաթխելու է:

¹ Վ. էրմ, Պուրճ:

² Գ. լ. Colle de poisson. Տ. Պաւլը Առ-Բաւլը:

³ Գ. լ. Alun. Տ. Պաւլը: